

ՄԱՐԹԱ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժնի անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ
Հայ-ռուսական (պլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի հայցորդ



**ԵՐԵՒԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՈՒ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԶՐԵԱԿԱՆ
ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հոդվածում հեղինակը վերլուծության է ենթարկել ծնողի կամ այն անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն, կամ մանկավարժի, կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից երեխայի դաստիարակության պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար նախատեսված քրեական և վարչական պատասխանատվության առանձնահատկությունները: Ուսումնասիրության է ենթարկվել ոչ միայն ՀՀ գործող օրենսդրությունը, այլև ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը: Արդյունքում կատարվել են համապատասխան առաջարկություններ:

Հիմնարաներ- երեխա, անչափահաս, ընտանիք, դաստիարակություն, քրեական, վարչական, պատասխանատվություն:

Երեխայի իրավունքների՝ որպես մարդու իրավունքների պաշտպանությունն իրականացվում է ինչպես մարդու իրավունքներին նվիրված միջազգային իրավական փաստաթղթերի միջոցով, այնպես էլ երեխայի իրավունքների պաշտպանությունը նվիրված հատուկ փաստաթղթերով:

Երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ առկա է ծավալուն իրավական բազա, որն ուղղված է տարբեր ոլորտներում երեխաների պաշտպանությանը, սակայն պետք է արձանագրենք, որ առկա են որոշ խնդիրներ՝ կապված այդ իրավունքների իրագործման մեխանիզմների և ընթացակարգերի բացակայության հետ: Սինչև երեխայի շահերի պաշտպանությունն ապահովող միջազգային օրենսդրության ուսումնասիրությանն անցնելը, հարկ է նշել, որ և՛ ազգային, և՛ միջազգային օրենսդրության համաձայն՝ երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր անձ:

ՀՀ Սահմանադրության¹ փոփոխությունները, որոնք ընդունվել են հանրաքվեի միջոցով 2015 թվականի դեկտեմբերի 6-ին, մարդու իրավունքների տեսանկյունից նախատեսել են մի շարք հիմնարար փոփոխություններ, նոր դրույթներ են նախատեսվել նաև հատուկ երեխայի իրավունքների համատեքստում՝ այս ոլորտն ավելի ներդաշնակեցնելով միջազգային իրավական չափանիշներին:

ՀՀ Սահմանադրության՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 3-րդ հոդվածն ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Այսպիսով, մարդու բարձրագույն արժեք լինելու սկզբունքը վերաբերում է նաև երեխաներին: Այս սկզբունքի շրջանակներում ենթադրվում է, որ ողջ իրավական համակարգի և պետության գործունեության նպատակը մարդն է, բոլոր գործողությունները ձեռնարկելիս դրանց հիմքում դրվում է մարդու հարգանքի, պաշտպանության և մարդու կենսական շահերի պաշտպանությունը: Երեխաների պարագայում այս սկզբունքի շրջանակներում պետությունը ստանձնում է լրացուցիչ պարտավորություններ՝ հոգավ երեխայի մասին՝ ելնելով երեխայի առանձնահատուկ կարգավիճակով պայմանավորված շահերից:

Անհրաժեշտ է նշել, որ Սահմանադրությունը կարգավորում է նաև ծնող-երեխա հարաբերությունները, մասնավորապես 36-րդ հոդվածը սահմանում է, որ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության լիարժեք ու ներ-

www.journal.lawinstitute.am

դաշնակ զարգացման մասին:

Երեխայի իրավունքների պաշտպանության և ներդաշնակ զարգացման ապահովման տեսանկյունից կարևորվում է նաև ընտանիքին նվիրված կանոնակարգումը: ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածն ամրագրում է ընտանիքի պաշտպանությունը և հռչակում «Ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են»: Առանց որևէ կասկածի, երեխայի բնականոն զարգացումը, որի պայմաններում կարող են երաշխավորվել նրա հիմնական իրավունքները, առավելագույնս հնարավոր է ընտանիքի շրջանակներում, քանի որ, ըստ Սահմանադրության, հասարակության վերարտադրությունն ապահովող ընտանիքն է, այսինքն՝ կնոջ և տղամարդու միասնությունից կազմված ընտանիքը, որի պայմաններում է բացառապես հնարավոր երեխայի առողջ և ներդաշնակ զարգացումը:

Երեխայի իրավունքների առաջնային պաշտպանությունն իրականացվում է ընտանիքի շրջանակներում: Սահմանադրության 36-րդ հոդվածն ուղղակի սահմանում է ծնողների պարտականությունը հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար: Ուստի, մեր կարծիքով, «դաստիարակությունը» իրենից ներկայացնում է գործընթաց, որն ուղղված է.

1. անչափահասի առողջության ապահովմանը, ինչը երեխայի լիարժեք և բազմակողմանի զարգացման կարևորագույն նախադրյալ է հանդիսանում: Սահմանադրությամբ երաշխավորված է յուրաքանչյուրի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը: Երեխայի առողջ աճը ապահովելու նպատակով ծնողները և այն անձինք, ում վրա դրված է երեխային դաստիարակելու պարտականությունը, պարտավոր են նրան ապահովել սննդով, բարենպաստ պայմաններ ստեղծել կենցաղի և հանգստի համար:

2. Երեխայի կրթություն ստանալու իրավունքի իրագործմանը: ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածը սահմանում է կրթություն ստանալու իրավունքը, միաժամանակ ամրագրում է հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելը: Երեխաների դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող բոլոր հարցերը ծնողները լուծում են փոխադարձ համաձայնությամբ՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած

երեխայի կարծիքը:

Հայաստանի Հանրապետությունում երեխաների դաստիարակության հարցերը կարգավորվում են, նախ և առաջ, ՀՀ ընտանեկան օրենսգրքով², որի 41-րդ հոդվածի համաձայն՝

• յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու (որքան դա հնարավոր է), իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու, նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել նրա շահերին,

• երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք:

Ծնողի կամ նրանց փոխարինող անձանց պարտականությունները ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնք են.

• ծնողները սեփական երեխաների նկատմամբ ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ,

• ծնողական պարտականությունները ժամանակի մեջ սահմանափակ են: Դրանք ավարտվում են երեխայի չափահաս դառնալուն պես, բացառությամբ այն դեպքերի, երբ ծնողները պարտավոր են իրենց անաշխատունակ չափահաս երեխաների մասին հոգ տանել (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 73-րդ հոդված),

• ծնողների պարտականությունների իրականացումը պետք է պահպանի երեխայի շահերի գերակայությամբ,

• ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք:

Օրենսգրքում ամրագրված է այն սկզբունքը, համաձայն որի, ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխաների շահերին հակառակ: Երեխաների շահերի ապահովումը պետք է լինի ծնողների հիմնական հոգածության առարկան: Ծնողական իրավունքներն իրականացնելիս, նրանք իրավունք չունեն վնաս պատճառելու երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, նրանց բարոյական զարգացմանը: Երեխաների դաստիարակության եղանակները պետք է բացառեն նրանց նկատմամբ քամահրական, դաժան, կոպիտ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը, վիրավորանքը կամ շահագործումը: (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ

հողված): Այս դեպքում ծնողների նկատմամբ կիրառվում է ՀՀ ընտանեկան օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոցները, մասնավորապես՝ ծնողական իրավունքների գրկելը (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 59-րդ հոդված), ծնողական իրավունքների սահմանափակումը (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 63-րդ հոդված):

Այսպիսով, երեխաների իրավունքների պաշտպանությունն առաջնային է և բացարձակ, այն իրականացվում է նաև քրեաիրավական և վարչաիրավական մեխանիզմներով: Նշենք, որ քրեաիրավական պաշտպանությունը մարդու, նրա իրավունքների և ազատությունների պաշտպանությունն է հանցավոր ոտնձգությունից կամ դրանց իրական հնարավորությունից: Քրեաիրավական պաշտպանության ենթակա են ոչ բոլոր հասարակական հարաբերությունները, այլ նրանք, որոնց խախտումը կարող է հանգեցնել լուրջ հետևանքների կամ որոնք ոտնձգում են առավել արժեք ներկայացնող հարաբերություններին: Վարչաիրավական պաշտպանությունը պաշտպանության այն տեսակն է, որը նախատեսում է երեխաների նկատմամբ կատարված զանցանքների շրջանակը և դրա համար վարչական պատասխանատվությունը: Անվիճելի է, որ զանցանքները հանցագործություններից տարբերվում են հանրային վտանգավորությամբ: Չնայած նրան, որ զանցանքները հանդիսանում են առավել նվազ վտանգավորություն ներկայացնող արարքներ, սակայն երեխայի դեպքում դրանց վտանգավորությունն անհամեմատ ավելի բարձր է, քան, եթե համանման արարքները կատարվեն մեծահասակների նկատմամբ:

Ծնողական պարտականությունները չկատարելու, դրանք ոչ պատշաճ կատարելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված է իրավական պատասխանատվություն: Նախ՝ ՀՀ քրեական օրենսգրքի³ 170-րդ հոդվածով, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում ծնողի կամ այն անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն, կամ մանկավարժի կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: Միաժամանակ, վարչական պատասխանատվություն է նախատեսված ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 178-րդ հոդվածով, այն է՝ ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կողմից անչափահաս երեխաների դաստիարակության և ուսուցման պարտականությունները չարամտորեն չկատարելը, անչա-

փահասների կողմից թմրամիջոցներ օգտագործելու առանց բժշկի նշանակման կամ նրանց կողմից այլ իրավախախտումներ կատարելը, բացի հողվածի երրորդ մասով նախատեսված իրավախախտումներից, մասնավորապես՝ հասարակական վայրերում մինչև տասնվեց տարեկան դեռահասների հարբած վիճակում երևալը, ինչպես նաև նրանց կողմից ոգելից խմիչքներ օգտագործելը:

Ինչպես արդեն նշել ենք, երեխայի դաստիարակությանը վերաբերվող օրենսդրական պահանջների ապահովման երաշխիքներից մեկը ՀՀ քրեական օրենսգրքով երեխայի դաստիարակության պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար քրեական պատասխանատվության սահմանումն է:

Չնայած նրան, որ նշված հանցակազմը ՀՀ քրեական օրենսդրության մեջ նորամուծություն է (2003թ.), քրեաիրավական վիճակագրության տվյալները վկայում են, որ տվյալ հանցագործության դինամիկան գրեթե գրոյական է, քանի որ համաձայն ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների՝ 2016թ.-ի ընթացքում արձանագրվել է ՀՀ քր. օր.-ի 170-րդ հոդվածով նախատեսված թվով 2 հանցագործության դեպք, որոնցով հարուցված քրեական գործերով մի դեպքում քրեական գործը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի հիմքով, մյուսը՝ 2017թ.-ին կարճվել է նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, իսկ 2017 թվականի 10 ամիսների ընթացքում արձանագրվել է թվով 1 դեպք, որով նախաքննությունը դեռևս շարունակվում է:

Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում նշված բնույթի գրանցված հանցագործությունների ցուցանիշները չեն արտահայտում իրական պատկերը, քանի որ այս բնույթի հանցագործություններն ունեն լատենտայնության բարձր մակարդակ, ինչը պայմանավորված է նրանով, որ այդ հանցագործություններից տուժածները անչափահասներ են, որոնք չեն գիտակցում իրենց նկատմամբ կատարված գործողությունների հանցավոր բնույթը⁴:

Ուսումնասիրելով ՌԳ քր. օր.-ի 156-րդ հոդվածով արձանագրված դեպքերի վիճակագրությունը (Ռուսաստանում 2014 թվականին ՌԳ քր. օր.-ի 156-րդ հոդվածով դատապարտվել է 1211 անձ⁵), պետք է փաստել, որ համանման հողվածը գործող է:

Մեր կարծիքով, համանման արարքները կատարվում են նաև մեր հանրապետությունում, որի վկայությունն է անչափահասների կողմից կատարվող արձանագրված հանցագործությունների դեպ-

քերը (2017թ. 9 ամիսների ընթացքում Երևան քաղաքում 124 անչափահասի կողմից կատարվել է 133 հանցագործության դեպք, 2016թ.-ի՝ 105 անչափահասի կողմից 111 հանցագործության դեպքի դիմաց, այսինքն՝ հանցագործությունների թիվը 22-ով աճել է, համապատասխանաբար արձանագրելով հանցագործություն կատարած անչափահասների թվի աճ 19-ով): Կասկածից վեր է, որ այս մտահոգիչ ցուցանիշները միջնորդավորված վկայում են ծնողների կողմից երեխաներին դաստիարակելու պարտականության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման մասին, քանի որ անչափահասը դուրս է մնում ծնողի վերահսկողությունից, երբեմն՝ ծնողն իր անձնական օրինակով դրդում է երեխային հանցագործության կատարման, ներգրավում նրան հանցագործության կատարմանը կամ խրախուսում այն:

ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտ են հանդիսանում երեխայի նորմալ ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացումն ապահովող հասարակական հարաբերությունները:

Հանցագործության օբյեկտիվ կողմը բաղկացած է երկակի արարքների ամբողջականությունից՝ անգործությամբ՝ երեխային դաստիարակելու պարտականությունները չկատարելով կամ այնպիսի գործողություններով, որոնք չեն համապատասխանում ՀՀ ընտանեկան օրենսգրքով նախատեսված դաստիարակության պայմաններին՝ դաստիարակության պարտականությունները ոչ պատշաճ կատարելով, ինչը բացասաբար է անդրադառնում անչափահասի հոգևոր աշխարհի ձևավորման վրա, չի ապահովում նրա ֆիզիկական նորմալ զարգացումը, չի բավարարում նրա զարգացմանը, կյանքի մարտահրավերները ընկալելու, դրանց հաղթահարման ելքերը գտնելու և հաղթահարելու համար⁶: Նշված պարտականությունների չկատարումն առկա է այն դեպքում, երբ համապատասխան անձինք դրանք կատարելու իրական հնարավորություն են ունենում, բայց բացարձակ անգործություն են դրսևորվում:

Երեխային դաստիարակելու պարտականությունների ոչ պատշաճ կատարումն արտահայտվում է դրանց նկատմամբ անբարեխիղճ, որոշակի պահանջներին, կանոններին չհամապատասխանող, թերի վերաբերմունքի մեջ:

«Պարտականությունների չկատարումը» միաժամանակ ենթադրում է դաստիարակչական գործընթացին ոչ լիարժեք մասնակցություն, ինչպես նաև դաստիարակելու պարտականությունների մասնակի կատարումը ծնողի կամ այն անձի կող-

մից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականությունը, կամ մանկավարժի կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից, ինչպես նաև նշված գործողությունները ինչ-որ չափով կատարելը զուգորդված երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքով: «Չկատարումը» իրենից ներկայացնում է անչափահասին դաստիարակելու գործողությունների չկատարումը, այն միջոցների չձեռնարկումը, որոնց կատարման պարտականությունը ստանձնել էր անձը: Երեխային դաստիարակության պարտականությունների ոչ պատշաճ կատարումը ծնողների կամ նրանց հավասարեցված անձանց ձևական, աղճատված, հաճախ կանխամտածված թերի իրականացումն է:

Արձանագրենք, որ երեխային դաստիարակելու պարտականությունները պատշաճ կատարելը հարաբերական և գնահատողական կատեգորիա է, որը կարող է խնդիրներ առաջացնել պրակտիկայում, քանի որ դաստիարակելու պարտականությունը պատշաճ կամ ոչ պատշաճ կատարելը պետք է որոշվի հաշվի առնելով բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ: Վերլուծելով քրեախրավական նորմի բովանդակությունը, այնուհանդերձ գալիս ենք այն եզրահանգման, որ երեխայի դաստիարակության պարտականությունների մեկանգամյա չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ինքնին քրեորեն պատժելի արարք է: Ստացվում է, որ կարելի է նաև պատասխանատվության ենթարկել, օրինակ, ծնողին, որը երեխայի հետ համատեղ չի բնակվում և բացարձակապես չի մասնակցում նրա դաստիարակությանը, անգամ, եթե երեխան դաստիարակվում և խնամք է ստանում մյուս ծնողի կամ այլ անձանց կողմից: Հանցագործության որակման համար առաջին հերթին անհրաժեշտ է հաստատել տուժողի՝ անչափահասի հանցավորից կախվածությունն ու անմիջական կապը: Այն կարող է արտահայտվել նրանում, որ հանցագործության սուբյեկտը և երեխան միասին են բնակվում, հանդիսանում է երեխայի միակ խնամակալն ու դաստիարակը, հանցագործության սուբյեկտն ու երեխան մշտապես փոխադարձ կապի մեջ են գտնվում միմյանց հետ: Ամեն դեպքում, այդ կապը պետք է շարունակական բնույթ կրի, որպեսզի այդ ժամանակահատվածում որոշվի հանցավորի ու երեխայի միջև եղած կապի բնույթը, այդ կապի բացասական ազդեցությունը, երեխայի զարգացմանը չնպաստելը, նրա նկատմամբ հոգ չտանելը, նրան սննդով, հագուստով չապահովելը, առողջ միջավայր չստեղծելը, ընտանեկան ջերմության չստանալը և այլ բազում հանգամանքներ:

Ուսումնասիրությունները մեզ բերել են այն համոզման, որ ՀՀ քր. օր.-ի 170-րդ հոդվածի բովանդակությունը (արարքի օբյեկտիվ կողմը) կարծես թե կրկնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի⁷ 178-րդ հոդվածի բովանդակությունը: Վերջինս ուղղակի նշում է, որ ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կողմից անչափահաս երեխաների դաստիարակության և ուսուցման պարտականությունները չառանտրեն չկատարելը, անչափահասների կողմից թմրամիջոցներ օգտագործելն առանց բժշկի նշանակման կամ նրանց կողմից այլ իրավախախտումներ կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում ծնողների կամ նրանց փոխարինող անձանց նկատմամբ՝ սահմանված մվագագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով: Նույն հոդվածի 3-րդ մասը վարչական պատասխանատվություն է սահմանում ծնողների կամ նրանց փոխարինող անձանց համար՝ հասարակական վայրերում մինչև տասնվեց տարեկան դեռահասների հարբած վիճակում երևալու, ինչպես նաև նրանց կողմից ոգելից խմիչքներ օգտագործելու համար, որն առաջացնում է տուգանքի նշանակում աշխատավարձի քառասնապատիկի չափով:

Այստեղ խնդիրը կայանում է նրանում, որ երկու օրենսգրքերը արարքի բնորոշումը տալով, չեն հստակեցրել այն տարբերիչ հատկանիշները, որոնք հիմք կհանդիսանան մեկ դեպքում՝ անչափահաս երեխաների դաստիարակության և ուսուցման պարտավորությունները չկատարելը համարել քրեորեն պատժելի արարք, իսկ երկրորդ դեպքում՝ այդ արարքը գնահատել որպես վարչական զանցանք: Սա իհարկե գործնականում դժվարություններ է առաջացնում, քանի որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ հոդվածի համաձայն՝ հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում պետական և տեղական ինքնակառավարման հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը: Այսինքն՝ տարբեր օրենսգրքերով նախատեսված զանցանքի կամ հանցագործության համար պատասխանատվության ենթարկելու դեպքում ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար նախընտրելի իրավական ակտն է հանդիսանալու Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը, ոչ թե ՀՀ քրեական օրենսգիրքը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ համա-

ձայն ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 178-րդ հոդվածով վարչական վարույթ իրականացվել է 2014թ.-ին՝ թվով 2 դեպքով, և առ այսօր վիճակագրությունը գրոյական է: Սա, իհարկե, ևս չի վկայում այն մասին, որ մեր հանրապետությունում մնանատիպ դեպքերը բացակայում են:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասի, նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը պետք է զուգորդվի անչափահասի նկատմամբ դաժան վերաբերմունքով: Սեր կարծիքով, դաժան վերաբերմունքը դա անողը, անգութ, անխիղճ վերաբերմունքն է 18 տարին չլրացած անձի նկատմամբ: Վերաբերմունքը ինչ-որ բանի նկատմամբ ենթադրում է արարքների ամբողջականություն, որոնք կարող են արտահայտվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ: Արարքների այսպիսի համակարգը արտացոլում է սուբյեկտի դրսևորած վարքը, որը բնութագրվում է դաստիարակության պարտականությունները չկատարելով:

Դ.Ելիսենը նշում է, որ «...դաժան վերաբերմունքը» երեխաների նկատմամբ՝ ֆիզիկական բռնությունն է, ֆիզիկական պատիժը, սեքսուալ բռնությունը, հոգեկան բռնությունը, երեխայի շահերի արհամարհումը⁸: Կարծում ենք, որ «դաժան վերաբերմունք» հասկացության այս բացատրությունը ընդունելի չէ, քանի որ քրեական իրավունքի դրույթներից ելնելով, ֆիզիկական բռնությունն ու ֆիզիկական պատիժը թերևս միևնույն հասկացությունն են, սակայն սեքսուալ բռնությունը ինքնուրույն գնահատականի արժանի հանգամանք է, քանի որ դրա համար քրեական օրենսդրությունն այլ մոտեցում է դրսևորում, այդ արարքը նախատեսելով այլ հոդվածում, սահմանելով դրա համար համապատասխան պատժատեսակ և պատժաչափ:

Դաժան վերաբերմունքը բավականին լայն, արժեքավորվող հասկացություն է: Այն ընդգրկում է տուժողին ֆիզիկական և հոգեկան տառապանքներ պատճառող բազմաթիվ արարքներ, որոնք կարող են դրսևորվել թե ակտիվ գործողություններով, և թե անգործությամբ: Որպես գործողությամբ դաժան վերաբերմունքի օրինակ են ծառայում ծեծը, խոշտանգումը, ծաղրուծանակը, ազատությունից ապօրինի զրկելը և այլն: Դաժան վերաբերմունքի անգործությամբ դրսևորման օրինակ կարող են համարվել սննդամթերքից տևականորեն զրկելը, կացարան, հագուստ և ընդհանրապես գոյության համար անհրաժեշտ միջոցներ տրամադրելու, բժշկական օգնություն ցուցաբերելու մերժումը և այլն:

Եթե դաժան վերաբերմունքը կարող է արտահայտվել երեխային սննդամթերքից տևականորեն զրկելով, կացարան, հագուստ և ընդհանրապես գոյության համար անհրաժեշտ միջոցներ չտրամադրելով և այլն, ապա դժվարություններ են առաջանում նույն հոդվածի 1-ին մասով օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների շրջանակը սահմանելիս: Ենթադրվում է, որ քննարկվող հանցակազմի կապակցությամբ դաժան վերաբերմունքի տակ պետք է հասկանալ ոչ թե մեկանգամյա դեպքը (չնայած դա էլ ամբողջովին չի կարելի բացառել), այլ որոշակի գործողությունների համակարգը¹⁰: Մեր կարծիքով, հաշվի առնելով այն, որ քննարկվող հանցագործությունը կատարվում է հիմնականում անգործության դրսևորմամբ, ուստի օբյեկտիվ կողմի որպես պարտադիր հատկանիշ, ՀՀ քր. օր.-ի 170-րդ հոդվածի 1-ին մասում անհրաժեշտ է սահմանել երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը գուցորդված դաժան վերաբերմունքով:

Կարծում ենք նաև, որ նպատակահարմար է 170-րդ հոդվածի 2-րդ մասը համալրել ևս մեկ այլ որակյալ դարձնող նորմով, մասնավորապես՝ երկու և ավելի անչափահասների նկատմամբ, սահմանելով ավելի խիստ պատիժ:

Հարկ է նշել նաև այն, որ հատկապես մեծ է այն արարքների հանրային վտանգավորության աստիճանը, որոնց դեպքում չեն կատարվում կամ ոչ պատշաճ են կատարվում ակնհայտ անօգնական վիճակում գտնվող երեխաների նկատմամբ: Դրանց թվին պատկանում են այն անձինք, ովքեր ունեն հոգեկան տկարամտություն կամ հոգեկան խանգարումներ, ինչի արդյունքում վերջիններս օբյեկտիվորեն չեն կարող ճիշտ ընկալել իրենց հետ կատարվածը կամ ֆիզիկական արատներ, հաշմանդանություն ունեցողները: Այս հանգամանքները նպատակահարմար ենք գտնում հաշվի առնել որպես տվյալ հանցակազմը որակավորող դարձնող ևս մեկ հատկանիշ:

Այս հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիտավորությամբ: Դիտավորության բովանդակությունը կազմում է հանցավորի կողմից անչափահասի դաստիարակման պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և նրա նկատմամբ դաժան վերաբերմունքի հանրային վտանգավորության գիտակցումը: Առանձին գիտնականների պնդումները, թե տվյալ հանցագործությունը կարող է անզգուշությամբ կատարվել, մեր կարծիքով, անհիմն են, քանի որ երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կարող է առկա լինել միայն անուղղա-

կի դիտավորությամբ:

Հանցագործության սուբյեկտները հատուկ են, դրանք երեխայի դաստիարակության համար պատասխանատու անձինք են: Երեխային դաստիարակելու պարտականությունը դրված է ծնողների (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 51-րդ հոդված), որդեգրողների (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մաս), խնամակալների (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մաս), խնամատարների, մանկավարժների կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների վրա:

Անձին ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածով պատասխանատվության ենթարկելիս անհրաժեշտ է հիմնավորել երեխային դաստիարակելու պարտականության առկայության փաստը, ինչպես նաև նրա կողմից այդ պարտականությունը կատարելու սուբյեկտիվ հնարավորությունը: Այն, ինչպես հայտնի է, կախված է մի շարք գործոններից՝ անձի ֆիզիկական և հոգեկան հատկանիշներից, արարքի կատարման պահին նրա առողջական վիճակից, գիտելիքների մակարդակից և այլն¹¹:

Երեխաների իրավունքների պաշտպանության անմիջական երաշխավորողն ու իրագործողը համարվում է պետությունը՝ ի դեմս համապատասխան իրավասու մարմինների: Այս համակարգում առանցքային տեղ է զբաղեցնում ոստիկանությունը, որի կարևորագույն խնդիրներից է մանկության պաշտպանությունը, հանցավորության դեմ պայքարը, անչափահասների դեմ ուղղված հանցագործությունների բացահայտումն ու կանխարգելումը: Որքան էլ երեխայի դաստիարակությունն ու խնամքը իրականացվում է ընտանիքում, միևնույն է այդ ապահովելու նպատակով պետությունը և նրա համապատասխան մարմիններն օգնություն են ցույց տալիս ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին՝ երեխայի բարեկեցությունն ապահովելու համար: Ինչու չէ՞ կարևոր նշանակություն ունի պրոֆիլակտիկ աշխատանքը ինչպես անչափահասների, այդպես էլ նրանց ծնողների կամ վերջիններիս փոխարինող անձանց, մանկավարժական անձնակազմերի և բոլոր այն անձանց հետ, ում վստահված է անչափահասների դաստիարակությունը:

ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով ստորաբաժանումներն իրենց ֆունկցիոնալ պարտականությունները իրականացնելիս առաջնորդվում են ՀՀ գործող օրենսդրությամբ և ներքին ու անհատական իրավական ակտերով: Անչափահասների նկատմամբ հանցագործություններն ու իրավախախտումները նախականիսելու և խափա-

նելու նպատակով, ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով ստորաբաժանումները անչափահասների ծնողներին կամ նրանց փոխարինող անձանց հետ իրականացնում է պրոֆիլակտիկ դաստիարակչական բնույթի աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում հսկողություն սահմանում՝ պրոֆիլակտիկ հաշվառման վերցնելով: Ներկայումս ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ենթակա ստորաբաժանումների անչափահասների գործերով բաժանմունքներում պրոֆիլակտիկ քարտային հաշվառման մեջ գտնվում են թվով 8 ծնող, որոնց հետ մշտապես անհատական պրոֆիլակտիկ աշխատանքներ են իրականացվում, ընդ որում՝ Երևանի քաղաքապետարանի Երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի և համայնքների սոցիալական աջակցության կենտրոնների, խնամակալության և հոգաբարձության մարմինների հետ համատեղ: Սակայն, վերլուծելով ոստիկանության նշված ստորաբաժանումների կողմից այս ուղղությամբ իրականացվող աշխատանքները և ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կողմից տրամադրված տվյալները, գալիս ենք այն եզրահանգման, որ թե ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածով, թե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 178-րդ հոդվածով վիճակագրության իրական պատկերը չի արտացոլում, ուստի անհրաժեշտ է ակտիվացնել իրականացվող միջոցառումները՝ ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կողմից թույլ տրվող նմանատիպ երևույթները բացառելու նպատակով:

Կասկածից վեր է, որ հիշյալ աշխատանքների արդյունավետությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել կոմպլեքսային աշխատանք, ոստիկանություն-ընտանիք-դպրոց-հասարակություն ձևաչափով սերտ համագործակցության պայմաններում: Սակայն պետք է փաստել, որ այն հաճախ չի հաջողվում՝ ելնելով արդեն իսկ ձևավորված ազգային կարծրատիպից, որ ոստիկանության հետ համագործակցությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ, ասենք, ուսումնական հաստատության հեղինակության վրա:

Գործող ՀՀ քրեական օրենսգրքը գործողության մեջ է դրվել 2003 թվականի օգոստոսի 1-ից: Մի շարք հեղինակներ, օրենսգրքի նորմերի գիտական վերլուծության ու կիրառման պրակտիկայի արդյունքում հանգել են այն եզրահանգման, որ օրենսգրքում առկա են բազմաթիվ թերություններ, իսկ օրենսգրքով առաջարկվող կարգավորումներն անհրաժեշտ է համապատասխանեցնել քրեական իրավունքի տեսության ու օրենսդրության ժամա-

նակակից միտումներին համահունչ հայեցակարգային նոր կառուցակարգերին ու ինստիտուտներին, ուստի հանրությանն է ներկայացվել նոր քրեական օրենսգրքի նախագիծը¹², որում առկա է նաև համապատասխան առաջարկություն քննարկվող հոդվածի կատարելագործման վերաբերյալ, մասնավորապես՝

Հոդված 230-րդ. Երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը

1. Ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա երեխայի դաստիարակության պարտականություն է դրված, երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որը հանգեցրել է երեխայի ֆիզիկական կամ հոգեկան առողջության վատթարացման՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը ութանասուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանքը, որը՝

1) գուգորդվել է անչափահասի նկատմամբ դաժան վերաբերմունքով կամ

2) անզուրկությամբ առաջացրել է երեխայի առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում, հանգեցրել է այլ ծանր հետևանքի՝ պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Ուսումնասիրելով ՀՀ նոր քրեական օրենսգրքում առաջարկվող փոփոխությունները, կարծում ենք որոշ դիտարկումների անհրաժեշտություն կա, մասնավորապես՝

• Ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա երեխայի դաստիարակության պարտականություն է դրված, երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որը հանգեցրել է երեխայի

ֆիզիկական կամ հոգեկան առողջության վատթարացման:

Այս դեպքում տարանջատումը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համանման հոդվածի դիսպոզիցիայից կատարվում է ըստ առաջացած հետևանքների: Նշենք, որ երեխայի ֆիզիկական կամ հոգեկան վատթարացումը հարաբերական է և անհատական, ելնելով երեխայի ֆիզիկական և առողջական առանձնահատկություններից դժվար կլինի սահմանել ֆիզիկական կամ հոգեկան վատթարացման առկայությունը: Զննարկվող հանցագործության հանցակազմը ձևական է, որի ավարտման պահը օրենսդիրը չպետք է կապի հանրության համար վտանգավորության հետևանքի առաջացման հետ և արարքը ավարտված համարվի օրենքով նախատեսված գործունակության կամ անգործունակության բուն փաստով:

Հայեցակարգի 230-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական պատասխանատվություն է նախատեսված նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարումը, որը անզգուշությամբ առաջացրել է երեխայի առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում, հանգեցրել է այլ ծանր հետևանքի:

Այս դեպքում պետք է համաձայնենք օրենսդիրի հետ, սակայն կարծում ենք, այս որակյալ հատկանիշը նպատակահարմար է նախատեսել որպես քննարկվող հոդվածի 3-րդ մասը կազմող հանցանք:

Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

1. Ծնողի կամ այն անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն, կամ մանկավարժի կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ զուգորդված անչափահասի նկատմամբ դաժան վերաբերմունքով՝

.....

2. Նույն արարքը, որը

1) կատարվել է երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) կատարվել է ակնհայտ անօգնական վիճակում գտնվող անչափահասի նկատմամբ՝

.....

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված հանցանքները, որոնք

1) անզգուշությամբ առաջացրել է երեխայի

առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում, հանգեցրել է այլ ծանր հետևանքի

.....

Մնացած դեպքերում էլ, երբ ծնողի կամ այն անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն, կամ մանկավարժի կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից երեխային դաստիարակելու պարտականությունը չի կատարվի կամ ոչ պատշաճ կկատարվի առանց անչափահասի նկատմամբ դաժան վերաբերմունքի դրսևորման, հնարավոր կլինի օբյեկտիվորեն վարչական վարույթ իրականացնել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 178-րդ հոդվածով:

Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 178-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Ծնողների կամ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն, կամ մանկավարժի, կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից երեխային դաստիարակելու պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, անչափահասների կողմից թմրամիջոցներ օգտագործելն առանց բժշկի նշանակման կամ նրանց կողմից այլ իրավախախտումներ կատարելը (բացի սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված իրավախախտումներից)՝ առաջացնում է տուգանքի նշանակում ծնողների կամ նրանց փոխարինող անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

¹ ՀՀ Սահմանադրություն /27.11.2005թ./ ՀՀ ՊՏ 2005.12.05/ Հատուկ բողոքական ձևով 1426-րդ:

² ՀՀ ընտանեկան օրենսգիրք /09.11.2004թ./ ՀՀ ՊՏ 2005.01.19/4(376) /Հոդ. 60-րդ:

³ ՀՀ քրեական օրենսգիրք / 18.04.2003թ./ ՀՕ-528-Ն ՀՀ ՊՏ 2003.05.02/25(260) Հոդ. 407-րդ:

⁴ Ю.Е.Пудовочкин, “Ответственность за преступления против несовершеннолетних”, Спб, 2002, с.185
⁵ <http://crimestat.ru/offenses>

⁶ ՀՀ քրեական իրավունք, Հատուկ մաս, ԵՊՀ, Երևան 2012, էջ 323:

⁷ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք / 06.12.1985թ./ ՀՄՄՀԳ-ՄՍ 1985/23

⁸ Елисеев Д. Жестокое обращение с детьми как проблема современного общества//www.prof.msu.ru

⁹ ՀՀ քրեական իրավունք, Հատուկ մաս, ԵՊՀ, Երևան 2012, էջ 125:

¹⁰ ՀՀ քրեական իրավունք, Հատուկ մաս, ԵՊՀ, Երևան 2012, էջ 324:

¹¹ Кудрявцев В.Н. Объективная сторона преступления, М., 1960, С. 65.

¹² <https://www.e-draft.am/projects/496/about>

Марта Меликсетян

Начальник отделения по делам несовершеннолетних и предупреждения
насилия в семье Малатийского отдела управления г.Еревана полиции РА,
подполковник полиции,
соискатель кафедры уголовного права и уголовно-процессуального
права институт права и политики Российско-Армянского университета

РЕЗЮМЕ

Особенности уголовной и административной ответственности за неисполнение обязанностей по воспитанию несовершеннолетнего

В статье обсуждается проблема неисполнения обязанностей по воспитанию родителями или иными лицами, на которых возложены эти обязанности, а равно педагогом или другим работником образовательного, воспитательного, лечебного учреждения. Представлены статистические данные касательно возбуждения уголовных дел по ст.170 УК РА, а также привлечения к административной ответственности по ст. 178 КоАП РА, изучены проблемы квалификации деяния по указанным статьям, сделаны соответствующие выводы и предложения, направленные на совершенствование ст. 170 УК РА и ст. 178 КоАП РА.

Ключевые слова: *ребенок, несовершеннолетний, семья, воспитание, уголовная ответственность, административная ответственность.*

Marta Meliksetyan

Head of the Department of Juvenile Affairs and
Prevention of Domestic Violence of the Malatia Division of
Yerevan City Department of the Police of RA,
lieutenant colonel
PhD student of the chair of criminal and criminal procedure
law of the Russian-Armenian (Slavonic) University

SUMMARY

The characteristics of criminal and administrative liability of avoiding the responsibility of upbringing the child

The article discusses the problem by the parents and by a person who has a legal responsibility to rear a child or by the pedagogues and other educational, medical officials and is connected with the characteristics of Criminal and Administrative liability of avoiding or inappropriately performing the responsibility of upbringing the child. The statistical data of detected cases and evaluative characteristics of the Article 170 of the Criminal code and the Article 178 of the Administrative code have been analyzed. The proposals based on the analyses have been made linked to the improvement of subjects and the content of two Articles.

Key words: *a child, an underage, a family, upbringing, criminal, administrative, liability.*